Գույքի վարձակալության
Պայմանագիր

ք.Երևան Օր/ամիս/տարեթիվ

«Կազմակերպության անունը», ի դեմս տնօրենի՝ Անուն Ազգանուն, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Վարձակալ, մի կողմից և ԱՁ «Գայանե Պետրոսյան»–ը (ՀՎՀՀ՝ 20254951), մյուս կողմից, այսուհետ՝ Վարձատու, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Վարձատուն տարեթվի ամսի օր-ից մինչև ամսի օր–ը «Միջոցառման անվանումը» շրջանակներում տարեթվի ամսի օր–ից մինչև ամսի օր–ը Վարձակալի ժամանակավոր օգտագործմանն է հանձնում սույն Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելվածում նշված գույքը, իսկ Վարձակալը պարտավորվում է վճարել դրա համար։

1.2. Սույն պայմանագրի 1.1. կետում նշված Գույքը Վարձատուն հանձնում է Հանձնման-ընդունման ակտի հիման վրա, որը սույն պայմանագրի անբաժանելի մասն է հանդիսանում։

1.3. Վարձատուն երաշխավորում է, որ սույն պայմանագրի 1.1. կետում նշված Գույքը վաճառված, գրավ դրված, վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, դատական վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում։

1.4. Վարձակալության հանձնված Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար։

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1. Վարձակալից պահանջել Գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխան.

2.1.2 Վարձատուն իր հայացողությամբ իրավունք ունի պահանջել վճարել կանխավճար վարձակալած գույքի արժեքի 30% -ի չափով պայմանագիրը կնքելու պահին սույն պայմանագրի 3 կետում նախատեսված վճարի (վարձավճարի)։

2.1.3. Վարձակալի կողմից սահմանված ժամեկտում կանխավճարը չվճարելու դեպքում վարձատուն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ վճարել վարձավճարը ամբողջությամբ մինչ վարձակալած գույքի հանձնումը, կամ չեղյալ համարել (լուծել) սույն պայմանագիրը.

2.1.4. պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Վարձակալը Գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան.

2.2. Վարձատուն պարտավոր է՝

2.2.1. Գույքը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում.

2.2.2. Գույքը Վարձակալին հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով (տեխնիկական անձնագիր, որակի հավաստագիր և այլն).

2.2.3. Վարձակալին նախազգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին.

2.2.4. Վարձակալի պահանջի դեպքում անհատույց վերացնել Գույքի թերությունները կամ իջեցնել վարձավճարը։

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1. պահանջել Վարձատուից սույն պայմանագրի 1.2. կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել Գույքը.

2.3.2. Վարձատուից պահանջել իրեն տրամադրելու Գույքի պատկանելիքներն ու դրան վերաբերող փաստաթղթերը.

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. ժամանակին վճարել Գույքն օգտագործելու համար սույն պայմանագրի 3 կետում նախատեսված վճարը (վարձավճարը).

2.4.2 Գույքը պահպանել պատշաճ վիճակում, իր հաշվին, սակայն Վարձատուի միջոցով կատարել դրա ընթացիկ վերանորոգումը և կրել Գույքը պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը.

2.4.3. պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով դրա բնականոն մաշվածությունը։

3. Վարձատրության չափը և վճարման կարգը

3.1. Վարձավճարի չափը կազմում է ???? / / ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը, որից ?????? / / դրամը վճարվում է մինչև 20??թ–ի ամսի օր-ը, իսկ մնացած՝ ??????? / / դրամը՝ Գույքը Վարձատուին հետ հանձնելուց հետո Վարձատուի կողմից դուրս գրված հաշիվ–ապրանքագրի հիման վրա 5 /հինգ/ օրվա ընթացքում։

3.2. Սույն Պայմանագրի 3.1 կետում նշված գումարը Վարձակալը Վարձատուին է փոխանցում սույն Պայմանագրում նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով։

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Վճարներն ուշացնելու համար Վարձակալը Վարձատուին վճարում է տուգանք՝ պայմանագրի գումարի 0.5 տոկոսի չափով, և կետանցի յուրաքանչյուր օրվա համար տույժ՝ պայմանագրի գումարի 0,1 տոկոսի չափով։

4.2. Տուժանքի (տուգանքի կամ տույժի) վճարումը կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտականությունները կատարելուց կամ խախտումները վերացնելուց։

4.3. Եթե Վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար։

4.4. Վարձատուն պատասխանատվություն չի կրում Գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել Վարձակալին կամ պետք է Վարձակալի կողմից հայտնաբերվեին Գույքը զննելիս կամ Գույքը վարձակալության հանձնելիս դրա սարքինությունը ստուգելիս։

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն

պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի կամ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի հավելվածները դրա անբաժանելի մասն են:

7.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, հայերեն լեզվով: Յուրաքանչյուր Կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

8.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«Պատվիրատու»	«Կատարող»
«Ընկերության ասվանում» Հասցե՝ , ՀՎՀՀ՝ Բանկ «անվանումը» Հ/Հ՝ Տնօրեն՝ _____	«Ընկերության անվանում» ՀՎՀՀ՝ Հասցե՝ Երևան, Դավթաշեն 4 թաղ., 1-26 Բանկ՝ « անվանում» Հ/Հ՝ _____

Հավելված
Օր/ամիս/ տարեթիվ –ին կնքված
Գույքի վարձակալության պայմանագիր

Վարձակալվող գույքի ցանկ

Հ/հ	Անվանում	Քանակ
1		
2		
3		
4		

«Պատվիրատու»	«Կատարող»
«Ընկերության անվանումը» Հասցե՝ ՀՎՀՀ՝ Բանկ «Բանկի անունը» Հ/Հ՝ Տնօրեն՝ _____	«Ընկերության անվանում» ՀՎՀՀ՝ Հասցե՝ Երևան, Դավթաշեն 4 թաղ., 1-26 Բանկ՝ «անվանում» Հ/Հ՝ _____

Հանձնման-ընդունման ակտ

Օր/ամիս/տարեթիվ-ին կնքված Գույքի վարձակալության պայմանագրի

Ք. Երևան օր.ամիս.տարեթիվ.

«Ընկերության անվանումը», ի դեմս տնօրենի՝ Անուն Ազգանուն, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Վարձակալ, մի կողմից և ԱՁ «Գայանե Պետրոսյան»–ը (ՀՎՀՀ՝ 20254951), մյուս կողմից, այսուհետ՝ Վարձատու, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, կնքեցին սույն Հանձնման-ընդունման ակտը հետևյալի մասին՝.

1. Վարձատուն հանձնեց, իսկ Վարձակալը ընդունեց օր.ամիս.տարեթիվ-ին կնքված Գույքի վարձակալության պայմանագրի Հավելվածում նշված հետևյալ Գույքը.

Հ/հ	Անվանում	Քանակ
1		
2		
3		
4		

2. Կողմերը փաստում են, որ օր ամիս տարեթիվ–ին կնքված «Գույքի վարձակալության» պայմանագրի 1.1 կետում նշված Գույքը հանձնվել է պատշաճ որակով և բոլոր պատկանելիքներով:

«Պատվիրատու»	«Կատարող»
«Ընկերության անվանումը» Հասցե՝ ՀՎՀՀ՝ Բանկ «Բանկի անունը» Հ/Հ՝ Տնօրենի՝ _____	«Ընկերության անվանում» ՀՎՀՀ՝ Հասցե՝ Երևան, Դավթաշեն 4 թաղ., 1-26 Բանկ՝ «Անվանում» Հ/Հ՝ _____

Հանձնման-ընդունման ակտ

օր/ամիս/2023թ-ին կնքված Գույքի վարձակալության պայմանագրի

Ք. Երևան օր.ամիս.տարեթիվ

«Ընկերության անվանումը», ի դեմս տնօրենի՝ Անուն Ազգանուն, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Վարձակալ, մի կողմից և ԱՁ «Գայանե Պետրոսյան»–ը (ՀՎՀՀ՝ 20254951), մյուս կողմից, այսուհետ՝ Վարձատու, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, կնքեցին սույն Հանձնման-ընդունման ակտը հետևյալի մասին՝.

3. Վարձակալը հանձնեց, իսկ Վարձատուն ընդունեց օր.ամիս.տարեթիվ-ին կնքված Գույքի վարձակալության պայմանագրի Հավելվածում նշված հետևյալ Գույքը.

Հ/հ	Անվանում	Քանակ
1		
2		
3		
4		

4. Կողմերը փաստում են, որ օր ամիս տարեթիվ–ին կնքված «Գույքի վարձակալության» պայմանագրի 1.1 կետում նշված Գույքը հետ է հանձնվել պատշաճ որակով և բոլոր պատկանելիքներով:

«Պատվիրատու»	«Կատարող»
«Ընկերության անունը» Հասցե՝ ՀՎՀՀ՝ Բանկ «Բանկի անունը» Հ/Հ՝ Տնօրեն՝ _____	«Ընկերության անվանում» ՀՎՀՀ՝ Հասցե՝ Երևան, Դավթաշեն 4 թաղ., 1-26 Բանկ՝ «Անվանում» Հ/Հ՝ _____